**ՆԱԽԱԳԻԾ**

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական՝ 2024 թվականի հոկտեմբերի 24–ի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Ջերմուկ համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին

1.2. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին

1.3. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

1.4. ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազի՝ համայնքի շահերի պաշտպանության հայց ներկայացնելու վերաբերյալ ուղղված առաջարկությունը քննարկելու և հայցը ներկայացնելու իրավասությունը զիջելու մասին

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: